

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-10-5-Ա

ք. Երևան

20.10.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հոկտեմբերի 20-ի նիստում քննարկեց 2022 թվականի մայիսի 20-ին արտոնագրային հավատարմատար Ջարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ «Մանա գրուպ» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Արարատի մարզ 0735, գ. Վերին Արտաշատ, Անդրանիկի փ., տուն 11, AM) «Peri» (No20210679) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում 03-րդ, 05-րդ և 16-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «PerPery» («Ամարաս Վլադիմիրի Գասպարյան», Երևան, Ադոնցի 8, բն., 37, N 33040, 02.08.2021) համակցված ապրանքային նշանին: «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» 119-րդ կետի 2-րդ ենթակետի, 122-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման կարող են համարվել համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվել դրանց ձայնային նմանությունը, որը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ հայտարկված բառային

ապրանքային նշանում առկա «Peri» բառը չնայած իր ոչ էական տարբերությանը ներառված է գրանցված ապրանքային նշանի մեջ՝ կազմելով նրա վերջնամասը, և կարդացվում է՝ «Փերի»- Փըր(Փերի), «Peri», «Per(Pery)»: Անդրադառնալով Ձեր կողմից ներկայացված նկատառմանը, թե հակադրվող նշանի իրավատիրոջ գործունեությունը տարածվում է հեռուստատեսային զվարճալի հաղորդումների վրա, ցանկանում ենք տեղեկացնել, որ Գրասենյակի կողմից կայացված որոշումը վերաբերում է ավելի վաղ «PerPery» ապրանքային նշանին, որը գրանցված է նույնատիպ ապրանքների համար: Այս դեպքում հայտարկված ապրանքային նշանը կարող է գրանցվել միայն ավելի վաղ առաջնության թվական ունեցող իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնությամբ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում 03-րդ, 05-րդ և 16-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «PerPery» («Ամարաս Վլադիմիրի Գասպարյան», Երևան, Ադոնցի 8, բն., 37, N 33040, 02.08.2021) համակցված ապրանքային նշանին:

Փորձաքննության բաժնի փորձագետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման

խորհուրդը քվեարկության արդյունքում 7 կողմ և մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Չարուհի Մանուկյանի կողմից ներկայացված «Մանա գրուպ» ՍՊԸ ընկերության «Peri» (No20210679) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ